

յիշեալ զեղջ բնակչացն՝ յամարանոց կմեկնի, թող նա մեկնի իւր պապահոլութիւնն վայելելու. իսկ մեք մտադրութիւններս դարձնենք նոյն զեղջ տխուր տեսարանի վերայ որով նաև ականատես պիտի համարուենք Զինկիզ խանի, Լանկթամուրի և Հագարացուոց և այլ բունաւորաց զերութեան և անարաւութեան, որոց ժամանակ աւարկի և անտանելի վիճակում իբրև հոգեվարք կհեծեր Հայաստանն:

Քանզի Բազը խանն և 1) Ամիրգատա խանն 200 հեծելովք բնջ երկիս շրջապատելով նոյն զիւրն բունել կտայ քահանայն և բնակչաց մի քանի երևելիքն յանդիմանակտն խօսքերով կպահանջեն Այի մուրատ խանի կայքն, իսկ Հայերն երգամամբ և համոզանօք կուզեն հաւանացնել, թէ Այի մուրատ խանի կայքն չունիմք մեք բնաւ, դեռ (բնաւ) բառն բողբոլիին բերնէն շարտարեքած մտրակի և անգութ մահակների հարուածներն անընդմիջապէս կտեղծեն որդոմելաց վերայ առանց նայելոյ աչքին և երեսին, սաստիկ գանաւկոծելէն քահանայն և ժողովուրդը կարևեր վիրաւորելէն ետքը, նոցա բերնին պնդութենէ կհարկադրուին կողոպտել զգիւղն, վասն որոյ կհրամայն հեծելոցն անխտարաբար հարկանել և կողոպտել զգիւղն, յորմէ թէպէտ ի մէջ զիշերի ոմանք ի լերինս հանդերձ ընտանեօք և ոմանք յապաստանարանս անտառի կապաւնեն, իսկ հեծեալքն զիւրը կողոպտելէն և քանի ինչ տուն հրդեհելէն ետքը՝ բազմութեամբ կդիմեն Եկեղեցին, կկոտորեն զուռն, կանուռն աւետարանը, խաչքն, միւռնոսի շիշն լի միւռնոսով, վարպոյր Ծածարին, շուրջաղը, բուրվառն, սկին, ատենին, ճաշոցը և այլ մանրամասն սպասք Ծածարին. բոլորովին անգթութեամբ վարուելով, ծերոց, մանկանց և տղայոց զթաշարժ ձայնին չլսելով, և երբ մեկնել կաճապարեն քահանայն կհսակնեղան վիրաւորուած առաջ կդիմէ Եկեղեցական սպասքըն խնդրելու, այլ նոքա բալբոլիին կմերժեն, յետոյ նորանցից մին 20 մանկթ ուզելով՝ կկամենայ եկեղեցւոյն սպասքն վերադարձնել, ըստ պատահման բարեբախտաբար կհանդիպի այն տեղ Ագուլեցի Աւետիս աղայն որից քահանայն 30 մանկթ առնելով կտայ պահանջողին, բայց ոչ բոլոր կայք եկեղեցւոյն՝ այլ միմիայն աւետարանը, ժամագիրքը և շարականը կստանայ խեղճ վիրաւորեալ քահանայն, հուսկ ամենայնի իւրեանց թշնամական և ծաղրական կրիցը մի փոքրիկ թէատրոն կուզեն ներկայացնել, քանզի աւետարանն յանձնելով քահանային կստիպեն կարդալ բարձրաձայն որոյ հանդիսատես էին ամեն հասակի բնակիչք զեղջ և անգութ հեծեալք և երբ քահանայն սկիզբն կառնէ ընթերցման գաւազանի սաստիկ գանից հարուածներն շրջա-

պատած բարբարոսներէն անխնայաբար կտեղան իւր զլսոյն վերայ, զայս պատճառ պատճառելով « ոչ եթէ աւետարան կկարդաս դու, այլ զմեզ կհայհոյես թշնամաբար », և այսպէսով իւրեանց անօրէն կիրքը յաղեցնելով կմեկնին, քահանայն վիրաւոր դրութեան և ժողովուրդը սգոյ և արտմութեան վիճակի մէջ թողով:

Արդ կմնայ մեզ յուշադրութիւններս դարձնել մեր Գեր. Առաջնորդի հսկողութեանն, վասն զի այս արտմտիթ իրողութեան բողբոջողին ստանալուն պէս կուրծքն փտեցաւ հայրենասիրութեան ներքին բողբոջը, զոր բազմիցս փայլած տեսածնեք զանազան իրողութեանց մէջ, քանզի անմիջապէս այն բողբոջողին Գաղղիներէն և Պարսկերէն թարգմանել տալով իւր առանձին յայտագրովն Քրիստոնեայ հիւպատոսաց յուշադրութեանն կյանձնէ այսինքն Ռուսաց, Անգղիացուոց, Գաղղիացուոց և Պարսկերէնը Պարսից կառավարչացն, միանգամայն յայտնելով թէ թէպէտ վիշտը և զրկմէքը բունասիրութեամբ կրեցին այն թշուառ Հայազգիքն, իսկ կրօնից և քրիստոնէական հաւատոյ անարգութիւնքն ևս միթէ՞ նոցա միայն պիտի վերաբերէ, ոչ բնաւ, այլ համայն քրիստոնէից մանաւանդ ձեզ, տէր Հիւպատոս, որ պաշտպան էք քրիստոնէական Հաւատոյ Պարսկական բռնութեանց դէմ:

Գործոյ ընթացից իրականութեան որպիսութիւնն խոստանալով գրել ձեզ յարգոյ խմբագրութեանդ. այս մեր սիրելի ազգի լրութեան յուշադրութեան արժանաւոր խնդիրը ազգասիրաբար ընդունելով՝ ասպնջականել կկնդրեմ՝ ազգօգուտ Արարատիդ էջերումը:

Գ. Ի. Գ. Գ. (Յարո-նի-նէ-ան)

Ի 22 Յունիս 1872 թի
 Ի Գ. Ի. Գ.

ՀԱՄԱՌՈՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԻՐԻՄՈՒ ԵՒ ՊԵՍՍԱՐԱՊՈՒՅ ԲԱՆԻ ՄԻ ՀՈԳԵՒՈՐ ԵՒԱԿԱՆ ԳՐՈՒՅԱՑ ՆԵՐԿԱՑ ԳՐՈՒԹԵԱՆԸ.
 (Շարունի-նէ-ն):

Ազքիրմանի Գարոցը իմ զիտցածովս՝ տասն և հինգ տարիէն աւելի է որ կայ ու կգտնուի Ա. Աստուածածին եկեղեցւոյ սրահին մէջ իւր ճաւատը կրելով մեծատառ նշանակ մի այսպիսի արձանագրութեամբ « Ժողովրդական Գարոց Ղուսաւորչական Հայոց », Կտեսնէք որ ժողովրդական անունը կայ վերան. բայց ժողովուրդ ասելով պէտք չէ հասկանալ քաղաքիս Հայ հասարակութիւնը որ զարոցի հաշիւներուն ամեննէն շխտունուիր ու տեղեկութիւն մի չունի թէ ինչով կկառավարվի, հապա միայն Ա. ազգատոհմի, կամ բաւ ևս ասել այդ բազմաթիւ փերդատանին մէկ սակաւպիւտ կատարելութեանց տէր անձը, որ իրեն հայրաւանդ պարտք մի համարած է ի սկզբանէ

(*) Գարունի-նէ-ն (Սեւերնի) նահանգապետի որդին է Ա. Գարունի-նէ-ն:

անտի շինութեան դպրոցին՝ անոր բոլոր շարժական ու անշարժ կառուածքները իւր ձեռաց մէջ ամփոփելու եկեղեցւոյ կարգաց ու կանոնաց, քահանայից ժամերգութեանց յանդէպ խառնուելու անցնելու հարկէն բառ մի իմանալու, Հայերէն վարժապետներ կարգելու դպրոցին մէջ ու Էֆէն Տրամաժաժին պէս փոխելու զանոնք չգիտնալով որ վարժապետաց յանձնարարական փոփոխութիւնը՝ աշակերտաց յառաջադիմութեան առջև պատ քաշել կը նշանակէ, որով չեմ սխալուիր եթէ ասեմ՝ «ասորի նոր, վարժապետներ նոր կ'ընեն ի Վպրոցին»։ Ընաւ որ և իցէ հաշիւ չցուցանել չնայելով ժողովորդեան իրաւացի պահանջողութեանը, և սաստկագոյնս դարձանալ ու թշնամանալ եթէ մէկը յանդիմանի հաշուի խօսք բանալու և չն, և չն, և չն, ասոնց նման անթիւ բաներ։ Աւստի ինձ այնպէս կը թուի որ այդ նշանակ տախտակին վերայէն ատանց սխալանաց մէջ ընկնելու կամ ընդդէմ արդար խղճի բան մի գործած համարուելու, կարելի էր ազատարար ջնջել տախտակին արդի արձանագրութիւնը ու հսկայ տառերով գրոշմը հետեւեալը։ «Ասկը աղային օրհնեալ եղիցի»։

Գանք այդ խեղճ դպրոցին բազմադիմուն դրամագրիտոց տեսութեանը Խեղճ կասեմ, վասն զի մէկ անհատ մը խելքովն առանց հասարակութեան հետ խորհրդակցելու կառավարող դպրոցին աւելից աւելի յարմար ածական չլինելու Վպրոցը ունի մէկ խառնութիւն գոցցես բռնութեամբ նոյն Աղային կողմանէ կտակուած հանդերձ բոլոր ապրանքովը Մահտեսի Յովսէփ Ա. քրիստոնեանէն յօդուս դպրոցին իրաւ թէ միայն 3000 մանէթ արժողութեամբ։ Բռնութեամբ կասեմ, վասն զի հանգուցեալը զիջեալ յանհարին թախանձանս Աղային օրական հացի կարօտ եղբայր ու քոյր թողած է որ այլոց դնները կպտտին յետին թըշուառութեան մէջ Այդ 3000 մանէթը որ քանի մի տարի 300 մանէթ միայն արդիւնք կը երէր, փոխանակ աւելնալու տասն և երեք տարիէ հետէ, զբամազիտոյն կէսը պակասած է. արդիւնքն ալ գրեթէ չնչասպառ . . . Ինչ պատճառաւ։ Աղան զիտէ։ Վպրոցը սեպհական այգի մի ունի. որ միշտ 40, 50 բուրլիէն աւելի չբերէր տարին, մինչգեռ եթէ խնայել լինէ՛ կարելի էր կրկին արդիւնք ընդունել։ Ի՞նչ է պատճառը.— Աղան զիտէ։ Ագքիլմանի մէջ, ինչպէս նաև ուրիշ տեղեր, նախ նախան սովորութիւն մի կայ որ ծննդեան օրը Խաչը ջրէն հանելու համար փող կ'ընորհեն. այստեղ ստորագրութիւն մի կը արցուի բոլոր ժողովորդոց, զորս կ'հրաւիրեն (աղան կ'հրաւիրէ հասկացիր) ի նախարարութիւն և կ'հանգանակուի երբեմն 70, երբեմն 100 բուրլի, իսկ երբեմն շատ աւելի և ոչ երբէք պակաս, այն գումարներէն տասն մանէթը միայն կուտան եկեղեցւոյն. ուր կ'ընթան մնացեալները։ Աղան զիտէ։ Հայոց եկեղեցիէն զատ ուրիշ ազգեր Ագքիլմանի մէջ մտեղաթաղ (балдахниъ)

չունին. ուստի տասը տարի է որ միշտ ամեն նուազին 10 կամ 15 մանէթ վարձ կը տրուի Հայոց եկեղեցւոյն զայն առնելու համար. եթէ միջին թուով հաշուելը տարին այդ մտեղաթաղը տասն անգամ տասնական մանէթի առնուած՝ ամենայն տարի 100 մանէթ կ'ոյժանայ։ Ա՛ւր և ինչ բանի կ'ործագրուի այդ գումարը, աղան զիտէ մենք հաշուի մէջ չենք տեսներ։ Հայոց գերեզմանատան մէկ կողմը քարահանք լինելով՝ տասը տարի կայ որ հազարաւոր սաժին քարեր կ'որոտուցանու լաւ գնով Օտեսա վաճառուեցան, և ցարդ կ'վաճառուին. ու յոյս կայ որ ասկեց վերջն ալ երկար ատեն վաճառուին. ուր են այդ փողերը։ Աչ եկեղեցւոյ և ոչ իսկ վարժատան հաշուին մէջ կ'ընեն. ուստի . . . աղան զիտէ։ Սարգիս Չելքեղեանի կտակին զօրութեամբը 80 բուրլի տարին դպրոցին և 20 քահանայից պիտի տրուէր հանգուցեալոյն թողած տան արդիւնքէն. ուր են այդ փողերը, վեց տարի է որ բան չեմք տեսներ։ Աղային հարցանելու է. գուցէ դպրոցին հաշուին մէջ երևնայ։ Եւ միթէ դպրոցը հաշուէտու մար ունի՞ Բաւ լիցի. տարեկան արդիւնքն ու ծախքը զրուխ զիտի գալով, և ոչ մի կուպէկ աւելի կամ պակաս կտեսնուի հաշուի մէջ. ուստի և մանրամասն նշանակութիւն արդեանց և ծախուց իրաւամբ աւելորդ համարուած է։ Երթեմ եկ աշակերտներ և աշակերտուհիներ 200 մանէթի չափ փող կ'հատուցանեն. այդ փողերուն հաշիւը կայ։ Եթէ գումարներուն հաշիւը չենք տեսներ, իսկ փողերները բնականաբար կ'ստանանք։ Աղան միայն չմտնար, նա զիտէ թէ այդ 200 մանէթը ուր կ'երթայ։ Այս գումարներէն զատ ըստ հրաւիրանաց աղային քաղաքիս հասարակութեան մէկ քանի փողատեր մարդիկը քանի մի տարի առաջ ստորագրութիւն բանալով՝ մինչև վեց տարի ժամանակ պարտաւորուած են ունեք 25, ոմանք 20, ոմանք 15, իսկ ոմանք 10 ական մանէթ հատուցանել իւրաքանչիւր տարին գրեթէ 250 մանէթ. այս գումարին վերայ աւելցուր եկեղեցիէն ալ 120 բուրլի՝ նոյն դպրոցին կառավարութեանը համար տարեկան օժանդակութիւն, բոլորն ի միասին առնելով այնպիսի գումար մի կարող է բաղկանար որ աղան իրեն հոգաբարձութեան պաշտօնին համար բոճիկի կարօտ չլինէր, ու իրաւունք կուեննայ հասարակութեանէն փող ժողովել, բայց հաշիւ բնաւ չցուցանել . . .

Անցցէ մեր աղան իւր ճարտար գործունէութեամբը ու անձնուէր ազգասիրութեամբը, որով կսիրէ ամենայն տեղ պարծնեալ և իւր ամենակուլ անձը համարել զո՛հ զրած իւր քաղաքացեաց օգտին ու դպրոցին յառաջադիմութեանը վերայ։ Եւ իրաւ թէ այսչափ քաջագործութիւնք բաւական չլինելով՝ պատուելի աղան վերջին ատեններս հետամուտ է իւր նախնեաց օրինակին հարազատ հետևող հանդիսանալ, իսկ կորզել համեստարոց Տ. Աբրահամ քահանային ձեռքէն առաջ-

նորդական այդեաց կառավարութիւնը, զոր հանգուցեալ Առաջնորդ Ս. Գեորգ Արքեպիսկոպոսը իրեն յանձնած է ի վերապիտոցութիւն մշակութեան: Աղան կկարծէ թէ դպրոցի հոգաբարձութեան նման այս այդեաց կառավարութիւնն ալ պետք է անպատճառ ժառանգական լինի, վասն զի ժամանակաւ աները զանոնք կառավարեց ու միայն 180 բուրբի եկամուտ կցուցանէր առաջնորդաց յետոյ իրեն անդրանիկ եղբայրը շատ տարիներ նոյն և նման արգիւնք ցուցանելով, որոյ մեանելէն յետոյ պատուելի աղան թէև յոյս ունէր որ ինքը օրինաւոր ժառանգ ճանչցուի առաջնորդական այդեաց կառավարութեանը. բայց հոգևոր իշխանութիւնը բարեբաղդաբար աւելի հաւատարիմ անձ մի գտնելով՝ ազատեց փիճակիս Ս. Առաջնորդաց կայքը ապարկին ինամակալութենէ. իսկ զաղայն աւելորդ աշխատանքէ: Գուցէ նովին օրինակաւ ազատէ զինքը նաև եկեղեցւոյ ու Բըպրոցին ինամակալութենէն . . . :

Կեր. Եղիազար Արքեպիսկոպոսը իւր Վանոնք և կանոնադրութիւնը յաղագս ծխական դպրոցին Ագքիւմանի կազմեալ ի 11 Նոյնիսերի 1866 ա. մի, կոչուած տետրակին յառաջաբանութեանը մէջ՝ հաւատարի աղբիւրներէ քաղելով ու նոյն իսկ ժողովրդեան վկայութեանը վերայ հիմնելով կգրէ թէ Ագքիւմանի դպրոցը 8000 մանկէ աւելի դրամագլուխ ունի բայց ի տարեկան կամաւոր արգիւնքներէն ու թոշակաւոր և կիսաթոշակ աշակերտաց վարձէն: Այս գումարին մէջն է նաև հանգուցեալ Մ. Աղային բերանացի բանիւք կտակած 1000 մանկէ փողը յօգուտ դպրոցին, որ բոլորովին կորսուած դրամոց կարգն անցաւ. վասն զի աղան աղային ազգատոհմէն լինելով՝ որոց ունիւրդը ունիւրդը, յառաջաբանութեանը նախագասելով՝ մոռացուցեալ մէջ թողած են բոլորովին այդ գումարը: Բայց տեղոյս քահանաներէն մէկը ժառանգութիւն ստացած լինելով իւր հարգազատ եղբորէն՝ աղային փեսային պարտաւորուած է ամենայն տարի 25 բուրբի հատուցանել դպրոցին կերևի թէ ի պատիժ ժառանգութեան. . . :

Գպրոցին դրամադուլար տեսանք, համբերութիւն ունեցիր սիրելի ընթերցող, դպրոցին յառաջադիմութիւնը լսելու: Գպրոցը կրօնուսոյց վարժապետ չունի. վասն զի աղան այդ բանը չզիտեմ ի նշու համար աւելորդ առարկայից կարգը համարած է. մինչդեռ քաղաքիս մէջ 3 քահանայ լինելով՝ մէկը թէև առանց կանխագոյն հրամանի Ա. Ե. Ս. Վաթողիկոսին ամենայն Հայոց նշանակուած՝ կարող էր մէկը չափաւոր ուսուցիչ այդ ամենակարևոր դաստուարութիւնը ընել դպրոցին մէջ: Մէկ վարժապետ ունի արականաց դպրոցը որ Հայերէն ու Ռուսերէն լեզուն միանգամայն կուսուցանէ աշակերտաց. նոյնպէս առարկաներէն աշխարհագրութիւն, Թուաբանութիւն, Հայոց պատմութիւն ու Քերականութիւն. բայց զիտնա-

լու է որ այս առարկաներով պարապող աշակերտները կամ երկու հօգի են և կամ շատ շատ հինգ հօգի. պարապող կասեմ, վասն զի այս առարկաները սորված ու ելած աշակերտ մի դպրոցէն տակաւին չտեսանք. ուստի լաւ կաննք եթէ համարենք, որ այդ վարժապետը լոկ ընթերցանութիւն կսորվեցնէ Հայերէն ու Ռուսերէն: Գուցէ այդ առարկաներն ալ կարողանային սորվել աշակերտք ըստ բաւականին. եթէ մինչև 15 և 16 տարեկան հասակին այն տեղ մնային: Ուստի մենք խորհուրդ կուտամք վարժապետին որ նա աւելի ջանք ընէ թողով այդ առարկաները հայալեզու ընել մանուկները, որոնք առանց Հայերէն բառ մի իմանալու դպրոց կմտնեն, ու հազիւ հարկը բառ սովորած կկնեն դպրոցէն. իսկ առանց Հայերէն իմանալու թուութեան նման առարկայ սորվեցնելը ինչ բանի կուգայ: Նոյն վարժապետը կսորվեցնէ նաև գեղապրութիւնը: Այս վարժապետին աշխատասիրութիւնը կարող եմք ասել թէ ուսուցիչ համեմատ է. նա 20 բուրբի կրնալու ի սմանական ուսուցիչ: Օրիորդաց դպրոցին մէջ ալ մէկ վարժապետ Սայ նոյնպէս Հայերէն ու Ռուսերէն լեզուաց: Ներք ինձ նա եթէ ես կհամարձակուիմ զինքը Տոն-Քեստի փոքր ինչ նմանեցնելու. ըստ որում սա շատ բան կընէ. և մի և նոյն ժամանակ բան մի չընէր: Շատ բան բրածը այն է, որ երկար տարիներ փիճակիս գրեթէ ամենայն քաղաքներուն մէջ երբեմն տիրացու, երբեմն վարժապետ, երբեմն ալ վաճառական բայց միշտ առանց հաստատուն նպատակի ու արգեանց պտտելին յետոյ՝ բազմը զինքը ձգած է Ագքիւման ու ամուսնական լծով կապած է այս քաղաքի մէկ բարեպաշտ գերդաստանին. բայց չը գիտեմ թէ ի՞նչ պատճառաւ նոյնպէս դպրոցին հետ, յորում նա նոյնպէս 20 բուրբի կրնալու զրեթէ նոյն չափ ալ եկեղեցիէն ու ժողովուրդէն: Արևի թէ այդ ուսուցիչը Գպրոցին մէջ ու սպասաւորութիւնը եկեղեցւոյն մէջ մեր աղան նշանակած է իրեն իբրև ողորմութիւն, և կամ որ աւելի հաւատարիմ է ինամասխուսութեան ունեցած շնորքին համար ի վարձատրութիւն. վասն զի այս մասին մէջ յիրաւի նա քաջ է և աղային առջև մեծամեծ ծառայութիւններ ըրած է *): Իսկ չբածը այն է որ թէև վարժապետ է Օրիորդաց դպրոցին մէջ, բայց շարժանքով չգար դաստուարութիւն ընելու: Ըստ իմ կարծեաց չեկա-

(*) Զարմանալի երևոյթ է մեր ազգին մէջ որ սպասարկուող կարող երիտասարդները, թէ և ամենաարևածայր տեղեկութիւն ունեցողները լեզուաց ու զիտութեանց վերայ, շատ տեղեք հոգաբարձուք վարժապետ կնանակեն գուցէ երևակայելով թէ Գպրոցը անկեանց է միանգամայն Մարգարիտիւնը յիրաւի լաւ բան է, կարող երիտասարդաց նախաւոր զեպեցելու մէջ յիրաւի պետք է օգնել, բայց ոչ անպատճառ Գպրոցաց մէջ վարժապետ նշանակելով որ ընդունած ողորմութիւնը ինչպէս և իցէ հատուցանեն . . . :

ծր եկածէն աւելի արդիւնաւոր է. գոնեա աշակերտուհիք աւելի քիչ Տայհոյանք (չափազանցութիւն չհամարիք այս խօսքը) կլսեն:

Ասայնիք թէ աղան զինքը նշանակած է եկեղեցւոյ մէջ սպասաւոր և չափազանցանք, վասն զի թէև Ագ. քիրմանի եկեղեցին ինչպէս որ տեսանք, ունի քահանայներ պէտք եղածէն աւելի, ունի նաև երեցփոխան ըստ օրինի, բայց դոքա Տարկադուած են կոյրգլուրայն Տնազանդիլ աղային Տաճորիցը ըստ որում ժառանգական Տոգաբարձութիւն կրնէ եկեղեցւոյն վերայ ինչպէս նաև դպրոցին՝ շնայելով որ ըստ զօրութեան կայսերաՏաստատ օրինաց «Սրբազնագործ պաշտօննայք են թարկին անընդմիջական իշխանութեան վիճակաւոր Առաջնորդաց. իսկ ստորին եկեղեցականք Աւարիբիցուն կամ զխաւոր քահանային», ևս և ըստ զօրութեան Ազգախնամ և Ա. Ն. Վաթողիկոսի ամենայն Հայոց Առնդակին, որ Տրատարակաւած այս 1872 տարուան Արարատ ամսաթիւրթի Յունվար ամսոյն մէջ թէ «Մի տայցն զիրաւուն քահանայացուաց կրկող զուրար ի յունանունաց աստիճանի սարկաւազութեան ընդդէմ եկեղեցական կանոնաց», Օրիորդաց դպրոցին ուսուցիչը, որ Սևաստափոլի մէջանին է տակաւին ոչ միայն ուրար կձգէ ուսը, Տապա աղային թեքադրութեամբ քանի մի անգամ Տակառակուած է քահանայից Տետ, և թէպէտ Քիչնէի Հոգ. Վաւարութիւնը Տրամանադրով առ երեցփոխանն պատուիրած է զինքը արձակել ի սպասաւորութենէ. բայց վարժապետը անխիղճ կգանուի այդ Տոգեւոր Տրամանը կատարելու. ըստ որում մեր աղային նման աշխարհական ու աշխարհատես պահապան ու պաշտպան ունի ի նեղութեան . . .

Ես թէպէտ չեմ անորժեր մարդու մը անձնական յատկութիւններն ու պակասութիւնները քննելով զիր անցնել. ըստ որում՝ ամենքնիս ալ, ի թիւս որոց և ես ձեր խոնարհ ծառան շատ և շատ պակասութեանց տէր եմք, բայց ես կամեցայ այս քաղաքին Տոգարարձուին ու վարժապետին չափէ զուրս անիրաւութիւնները զուրս ցատկեցնելով՝ ճիշդ գաղափար մի տալ մեր այժմեան դպրոցաց քանի մի Տոգարարձուաց ու վարժապետաց անձնաւորութեանը վերայ այս վիճակին մէջ, որպիսեաց այսպիսի լուսաւորեալ դարու մէջ կը Տաւատացուի տակաւին մատաղերամ մանկանց ուսումնական ու բարոյական կրթութիւնը, Տասարակութեան նուիրած դրամները, դպրոցաց կառավարութիւնը ու կապաւոր յապազային յառաջադիմութիւն: Օրիորդաց դպրոցը վարժուհի մըն ալ ունի որ 150 մանէթ կընդունի, նոյնպէս իբրև ողորմութիւն. վասն զի աշակերտուհեաց Հայերէն բառեր սորվեցնելով կընայ Հայերէն ինքնին նոյնպէս սովորել: Գովելի ջանք, բայց դուք ալ կարող էք խոստովանուիլ, որ յոյժ անտեղի է դպրոցին մէջ:

Վերը ասացինք թէ կրօնուսոյց չկայ Ագ. քիրմանի դպրոցին մէջ, իբրև վերջաբան Ագ. քիրմանի դպրոցին դրութեանը յաւելցնենք նաև այն՝ որ երեցփոխութեան դաս նոյնպէս չկայ:

Ինձ այնպէս կթուի որ Ա. Ն. Վաթողիկոսը ծրական դպրոցաց կանոնադրութեան 11 յօդուածին մէջ այն մտքով կը արեհաճի Տրաման տալ որ մուտք դպրոցաց Տամարուին նաև տոկոսիք եկեղեցական գրամագլխոց կամ մասն ինչ ի գրամագլխոց անտի ըստ կարգադրութեան Թեմակալ Առաջնորդին և ըստ կանխագոյն գիտութեան Ա. Ն. Տափառ Վաթողիկոսին ամենայն Հայոց, որ Գլուրոցէն փոխադարձ օժանդակութիւն մի ինի եկեղեցւոյն բարեկիրթ քայաձայն երգիչներ պատրաստելով, որպէս զի մեր ազգի Գլուրոցաց Հոգևոր ազգային նշանակութիւնը պահպանուի, որով միայն կարող են իւրեանց նպատակին Տասանել. բայց կցաւի՜մ որ այդ բանը ո՛չ միայն Ագ. քիրմանի մէջ. Տապա նոյն իսկ Թէոդոսիա և ուրիշ քաղաքներ ամենեկն չկատարուիր. բայց ի Օտոսիայի Գլուրոցէն, բայց և այնտեղ յոյժ թերի:

(Շարունակելէ)

Մ Ա Յ Ր Ե Ն Ի Լ Ե Զ Ո Ւ

(Շարունակելէ)

№ 1.

Ուրիշ տեղ մենք ասացինք, որ շատ մտքեր, ուրոնք Տայերէն էլ գեղեցիկ կգուրս գային՝ պէտք էր Տարազատութեամբ թարգմանել, որովՏետե Տեղինակի մտածողութեան և միտք յայտնելու ձևերն էլ խնամով մշակված և գեղեցիկ են այսպէս «ВМѢСТѢ ТЕСНО, а ВРОЗНО СКУЧНО», փոքրիկ յօդուածի վերնագրի տեղ Պ. Տեր - Ա. Ենդեանցը գրել է «Ինձ Տետ մի խաղար», որ բոլորովին ուրիշ միտք է և բնագրից շատ տարբեր ու ստոր: Բայց Տարազատ թարգմանութիւն կարող էր, օրինակի Տամար, այսպէս լինել:

Միտանն նեղուած է, մեռել էլ յանդուանէ է:

Եղբայրը քրոջը ասումէ, «չը կպչն ս բզաւնիս», Գլուր էլ եղբորը պատասխանումէ. «դէ զուն էլ իմ տիկինիս չկպչն», Երեխաները մէկ մեկուց Տեաացան, բայց շուտով նրանք երկուսն էլ բեղբեցան:

Երեխաները ինչ - Բեղբեցան:

№ 2.

Գահաւորակ (Диван?), բայց աւելի լաւ էր զիւան տակ. — Պահարան (Комод?) մեր պապերը